



Հակոբ Պարոնյան

Խիկար

Խիկարի գուշակութիւնք

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք ս ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան ս ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ ս ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՅՈՒՆՈՒԱՐ

1 - 8 Յունուար

Անձրեաքեր հողմեր եւ սնանկութիւններ :

Պգտիկ տղաներն ու մեծ տղաները ծերերը պարտին զգուշանալ ցուրտէն:
Խոնաւութիւն կտիրէ ամենուրեք. հարբուխ եւ պգտիկ պարտքեր ունեցողներն
սենեակէ դուրս ելնելու չեն :

Իրարու Նոր Տարի, երկար օրեր եւ բարօրութիւն կմաղթեն այցետոմսերը :

Հաշու է կշիռները գոհացուցիչ չեն:

9 - 17 Յունուար

Փոփոխական օրեր :

Քանի մը լրագիրներ կփոխեն իրենց կարծիքները :

Երեսփոխանին մէկը ատենաբանութեան մէջ կկորսնցնէ խօսքին թելը եւ կ '
երթայ մոմ վառելու Ս. Մինասին : <!><!>

Բանաստեղծին մէկը ծով կնետէ ինքզինքն՝ մէջքը դդում կապելով :

Մեծ վաճառական մ ' իր պարտքերը վճարելու համար վճարումները
կդադարեցնէ: Աստուած հետը ըլլայ :

18 - 24 Յունուար

Ամպամած եւ խոնաւ :

Քանի մը ընկերութիւններ կլուծուին :

Երիտասարդին մէկը հարուստ աղջիկ մը կյափշտակէ, տունը կտանի եւ հազար
հինգ հարիւր ոսկի փրկանք կպահանջէ: Աւագակը փնտռուելու վրայ է :

Բառարան.

Փականք թրախօմա (դրամօժիտ) :

Ամուսին մը հազար ոսկի փրկանք կը խոստանայ իւր կինը լեռ մը տանողին :

Ասանկ ամուսիններուն համբերութիւն տայ Աստուած :

25 - 31 Յունուար

Ձիւն եւ անձրեւ :

Հողագործներն ուրախ են :

Ածխավաճառներուն հետ խօսելը դժուար է :

Մայրե՛ր, մայրե՛ր.

Ջգուշացէք ամսոյ մէջ մանչ գաւկի տէր ըլլալէ, որովհետեւ յունուարի մէջ ծնող մանչը կոռուսէր կ' ըլլայ: Աշխատեցէք աղջիկի տէր ըլլալ: Յունուարի մէջ աշխարհ եկող աղջիկը տնտեսագէտ եւ սակաւախօս կ' ըլլայ: Երկուքէն մին ալ ըլլայ՝ դարձեալ կբաւէ :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեւար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՓԵՏՐՈՒԱՐ

1 - 8 Փետրուար

Գիտէք արդէն, որ այս ամսուան մէջ կանայք քիչ կխօսին :

Հարաւր մէկ կողմէն կփշէ, հիւսիսը միւս կողմէն. երկու կողմերուն մէջ տեղ երերա՛ ու երերա :

Լրագիրներն ալ անանկ կփշեն :

Բժիշկները աղէկ ստակ կշահին :

Մարդասիրական ընկերութեան մը գանձապետն ընկերութեան դրամագլուխը հետը կ' առնէ ու հեռաւոր քաղաք մը կ' երթայ՝ օդափոխութեան համար :

Աստուած բժշկութիւն տայ :

8 - 15 Փետրուար

Հողմ եւ անձրեւ :

Կամուրջի վրայ գգուշացէք հովանոցներէն, որ աչքերնիդ չհանեն :

Առեւտրական հրապարակին վրայ շարժում մը կտեսնուի :

Ապառիկ մի՛ վաճառէք, այլ միշտ աշխատեցէք ապառիկ գնելու :

Ալ է կոծութիւն:

15 - 22 Փետրուար

Անձրեւին վերջը չեկաւ :

Տեղ տեղ կձիւնէ :

Գինեւտունները լեփ լեցուն են: Օղին ածուխէն արժան է :

Կուրծքի տկարութիւն ունեցողները վառարանին քով կնստին եւ Խիկար կկարդան: Խիկարի քանի մը թուղթ ընթերցումն միակ դեղ է կուրծքի տկարութեան դէմ. շնչափողերը կնաքրէ:

22 - 29 Փետրուար

Խառնակ օդ :

Խառնակ լուրեր :

Տեսէ՛ք սա խեղճ գաւառացին. գլխէն արիւն կը վազէ :

Կնկան մէկը մարտ նետեր է <!><!>. անուշադրութեամբ մարդուն գլուխը նետեր է սափորը պատշգամէն :

Լրագրաց խօսքին մի՛ հաւատար :

Մայրե՛ր.

Եթէ իմ խրատիս կլսէք՝ այս ամսուան մէջ գաւակ մի՛ բերէք, ո՛չ մանչ, ո՛չ աղջիկ. վասնզի Փետրուարի մէջ ծնող մանչերն գինեմոլ ու կեր ա խումի անձնատուր կ ' ըլլան, իսկ աղջիկներն շռայլ ու պարասէր կ ' ըլլան, իսկ երբ կարգուին՝ իրենց ամուսնոյն գլխուն փորձանք կ ' ըլլան :

Բո՛ւմ ...

Մի՛ վախնար :

Մեծ վաճառական մը սնանկացաւ, բան մը չէ :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՄԱՐՏ

1 - 9 Մարտ

Հողմ, անձրեւ, ձիւն, արեւ ...

Օդերու ֆաթուրա :

Կխրատեմ ծերերուն ու վատառողջներուն դուրս չելնել. փառք Տիրոջը, դուրս ելնելու պատճառ մ ' ալ չկայ. առեւտուրները դադրած են, ամեն մարդ փոխառութիւն ընելու համար միայն դուրս կելնէ :

Ապահովական ընկերութիւններն բաւական կը վնասուին. շատ նաւեր իրենց բեռը ծով կթափեն ալէկոծութեան պատճառաւ: Կնկան մէկն ալ իր էրիկը ծով կնետէ :

9 - 16 Մարտ

Հողմը շղաղարեցաւ :

Տեղ - տեղ կանձրեւէ :

Գաւառի մը մէջ սովը կսաստկանայ: Հանգանակութիւններ կբացուին սովելոց յօգուտ :

Անբան կենդանիներու մէջ հիւանդութիւն երեւան կու գայ. բանաւոր կենդանիներու մէջ դրամի պակասութենէ ուրիշ բան չտեսնուիր :

Վաճառականին մէկը տասը հազար ոսկի կը վաստակի սնանկութեամբ :

16 - 22 Մարտ

Ձմեռը կծերանայ :

Բաղդատեցէք ձմեռ եւ ծեր բառերն. կը կարծուի թէ ձմեռ ը ծեր էն ելած ըլլայ, ծեր ն ալ ձմեռ էն: Բանասէրներուն կարծիքը կը հարցուի :

Այսու ամենայնիւ չըլլայ որ հազուատնիդ թեթեւցնէք. հազուատի մասին որեւէ փոփոխութիւն եւ վնասակար է այս միջոցիս. հազուատը սկզբունքի չնմանիր :

22 - 31 Մարտ

Հողմային պարզութիւն :

Սրտի պարզութիւնը կը փնտռուի: Մսին գինը կբարձրանայ :

Երկաթուղոյ մ ' ընկերութիւնը կորոշէ առագաստ բանալ իւր կառքերու վրայ, որպէս զի քիչ մ ' աւելի արագ ընթանան :

Այս ամսուան մէջ ծնող մանչերը ազգային նուիրատուութեանց չեն մասնակցիր եւ ազգին մէջ կռիւ հանելու տրամադրութիւն կ ' ունենան: Իսկ աղջիկներն պճնասէր ու շոայլ կ ' ըլլան :

Մայրե՛ր, խնայեցե՛ք ազգին :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաորդ չեմ :

Ո՞ր տեսնուիմք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցուցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք ս ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացե՛ք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան ս ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ ս ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունիմք :

ԱՊՐԻԼ

1 - 7 Ապրիլ

Ապրիլին առաջին օրը կատակի համար սուտ խօսելու սովորութիւնը կամաց կամաց բնութիւն դարձաւ ամենուս քով, այնպէս որ այսօր քիչ մարդ կգտնուի, որ սուտ խօսելու համար ապրիլ 1 - ին սպասէ :

Չգուշացե՛ք խաբեբաներէն ... շաղակրատ բժիշկներէն :

Քանի մը պզտիկ հրդեհներ կպատահին :

Կղզոյ մը մէջ երկրաշարժի ցնցումներ կը զգացուին :

Մսավաճառութենէ սնանկացած մէկը քահանայ կճեռնադրուի :

8 - 14 Ապրիլ

Ախորժելի օդ :

Հետեւեալ հրաշքները տեղի կ' ունենան.

Մարդ շնանկանար.

Մարդուն մէկը հայերէն լրագրի մը բաժանորդ կգրուի եւ բաժանորդագինը կանխիկ կը վճարէ :

Մէկն քօնսուլիս էն <!><!> մեծ գումար մը կշահի.

Առանց թուոնիր ի կնիկ մը կտեսնուի հրապարակի վրայ.

Բանասէր մը լեզուաքննական յօդուած մը կիրատարակէ առանց հայիոյութեան :

Օդին գեղեցկութենէ խաբուելով հագուստնիդ մի պակասցնէք: Ապրիլ շողոքորթ ամիս մ' է :

15 - 21 Ապրիլ

Անպամած եւ խոնաւ :

Կաթերը բոլորովին ջուր կկտրին :

1892 - րդ տարեդարձ գինովութեան :

Չատկի առթիւ գինիի տակառներուն մէջ խեղդուողներ կգտնուին :

22 - 30 Ապրիլ

Ախորժելի եղանակներ :

Գինովութիւնը կշարունակուի :

Էրիկ մը կնիկէն ծեծ կ' ուտէ հաւկիթ գնած շրլլալուն համար :

Եպիսկոպոսին մէկը ինքզինքը կերուխումի տուած՝ կմերժէ գաւառի մ' առաջնորդութիւնն քաջատողջութեան պատճառաւ :

Այս ամսոյս մէջ ծնող մանչերը խաբեբայ ու մեծ վաճառական կ' ըլլան, աղջիկներն ալ տնտեսագէտ ու գեղեցիկ, միայն թէ քիթերնին քիչ մեծ կ' ըլլայ :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՄԱՅԻՍ

1 - 7 Մայիս

Յատակ օդ :

Գիղագնացութեան պատճառաւ ամեն տուն մէջմէկ քիչ կռիւ :

Առուտորները բացուեցան :

Ոսկերչաց շուկայն լի է բազմութեամբ. արժան մատնիներ, օղեր, ապարանջաններ, մանեակներ կծախէ ժողովուրդն աճուրդով, եւ ոսկերիչները կգնեն :

Հագարաւոր տուններ, գետիներ կը վաճառուին խիստ արժան գնով :

Խմբագիրները տան միջնորդ կղառնան :

Աստուած վերջերնիս բարի ընէ :

8 - 13 Մայիս

Օդը կշարունակէ յստակութիւնը :

Մութի մէջ խնդիրներ կան, որոց ոչ ոք կրնայ վերահասու ըլլալ :

Կանանց շրջագգեստները քիչ մ ' ալ կը կարճնան: Քանի մը կանայք էրիկ մարդու հագուստ կհագնին :

Հունձքերը լաւ երեւոյթ ունին, բայց հասկերուն մէջ բան չկայ. իմաստակ հասկեր :

14 - 20 Մայիս

Դեսպան մ ' ուրիշ դեսպանի մը տունը կը հրաւիրուի կերակուրի :

Հիւպատոս մը նեղ եւ պզտիկ կօշիկ հագնելուն համար փողոցէ մը անցած ժամանակ կ ' իյնայ: Լրագիրք ոմանք քաղաքականութիւն մը կտեսնեն այդ կօշիկին մէջ :

21 - 28 - 31 Մայիս

Օդերուն խօսք չկայ, բաց ի շնորհակալութենէ :

Տարութիւնը հետզհետէ կ' աւելանայ: Շատ ամուսիններու մէջ պաղութիւն կտիրէ :

Հողագործներն շատ ուրախ չեն: Շատ փոխանակագիրներ կմերժուին:
Մատակարար մը կճանքուի: Խոհարար մը սպասուիոյ հետ սիրահարութիւն կ' ընէ հարուստ տան մ' մէջ :

Ջգուշացէք ամսոյս մէջ գաւակ բերելէ. մանչերը կա'ն գրաշար կա'ն բանաստեղծ կա'ն դասատու կամ խմբագիր կ' ըլլան. իսկ աղջիկները միշտ նշանտուքի խօսքեր կ' ուզեն լսել :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա'հ եթէ կարողանայի չարիք մ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՅՈՒՆԻՍ

1 ~ 5 Յունիս

Չերնութիւնը կ' աւելնայ :

Կնաթողութիւններ կլսուին :

Մարդուն մէկը նարտ խաղացած ժամանակ կ' իյնայ կմարի, չկրնալով
հանդուրժել կելա յի հարուածներուն :

Ընդհանուր ժողովոյ մէջ ջերմ վիճաբանութիւն մը տեղի կ' ունենայ.
Երեսփոխանին մէկն իւր ընդդիմախօսին մէջքին կից մը կու տայ :

6 - 12 Յունիս

Տաք օդ :

Օղենուները կը սկսին գարեջուր խմել :

Լրագիրք գրելու նիւթ չեն կրնար գտնել :

Երկու մեծ գողեր կձերբակալուին :

Մատակարար մը իւր տան տիկնոջը աչք կտնկէ :

Տղայոց շատ պտուղ մի տաք :

Ամուսնացեալ մարդ մը աչք կտնկէ ուրիշի կնոջ վրայ :

13 - 19 Յունիս

Օդը յստակ :

Տաքութիւնը կ' աւելանայ. արիւնային մարդոց համար բարկանալու եղանակ չէ
... թող որ Փրկիչն <!><!> ալ լեցուն է :

Առեստուրները կդադարին :

Ամեն մարդ ծովու բաղանիք վարձելու յետեւ է :

Երկաթուղոյ մը շինութիւնները մեծ փութով առաջ կտարուին :

Մարդուն մէկը պարտքը կը վճարէ այն օրն՝ յորում տալ խոստացած էր: Խեղճ մարդ ...

20 ~ 27 ~ 30 Յունիս

Պիտի ճաթինք տաքէն :

Անվնաս փորհարութիւն մը կայ շատ մարդոց մէջ :

Ամերիկան նոր գիտ մը կ'ընէ: Շոգենաւի մը ածուխը կ'էս ճամբան կհատնի եւ չկրնար ճամբան շարունակել :

Ամսոյս մէջ ծնող մանչերը խելացի կ'ըլլան, իսկ աղջիկները դաշնակահար :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասատրդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ'ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա'հ եթէ կարողանայի չարիք մ'ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեւար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ'ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ'ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՅՈՒԼԻՍ

1 - 4 Յուլիս

Տարութիւնը սաստիկ է :

Վանքի մը մէջ քանի մը կրօնաւորներ պայմանագրութիւն կկնքեն՝ սիրով եւ միաբանութեամբ վանքը կողոպտելու համար :

Թերթ մը կդադրեցնէ իր հրատարակութիւնը :

Ժողովոյ մը անդամներուն մէջ երկպառակութիւն :

Տեսէ՛ք սա ցնդած պատաւը, հարս կ ' ըլլայ, երեսուն տարու երիտասարդի մը հետ կկարգուի :

5 - 11 Յուլիս

Տարութիւնը միեւնոյն է :

Արք եւ կանայք ծով կ ' երթան լուսցունելու :

Երկու օրուան մէջ անգղիերէն սորվեցնող քերականութիւն մը կհրատարակուի :

Կանանց թիւնիտ ներուն վրայ մէյմէկ ծաղիկ կդրուի:

12 - 19 Յուլիս

Պարզ եւ սօթ :

Գինովներուն վիճակը ցաւալի է :

Մեծ մարդ մը կպգտիկնայ եւ պգտիկ մարդ մը կմեծնայ :

20 - 31 Յուլիս

Աշխարհիս խաղաղութիւնը պահելու համար տէրութիւն մը կաշխատի: Տորենի գինը կ' իյնայ. հացի նկանակներու մէջէն մէյմէկ կտոր ածուխ կելլէ :

Ամսոյս մէջ ալ ծնիւն աղէկ բան մը չէ. մանչերն կնաթող կ' ըլլան, աղջիկներն թշուառ. ալ խոհեցէք անգամ մը:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուիմք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունիմք :

ՕԳՈՍՏՈՍ

1 - 9 Օգոստոս

Ջերմութիւնն քիչ մը նուազեցաւ :

Բոլոր աշխարհ ինք ն գինքը կերուխումի տուած է :

Առեստորները անգգալի կերպով կբացուին :

Կխնդրեն սա սեխերը ծով նետեցէք: Կուրծքի տկարութիւն ունեցողները ծով չը մտնեն :

10 ~ 17 Օգոստոս

Չովութիւնը կսկսի, ինչպէս նաեւ հարբուխը :

Ծովէն ելնելէ վերջը նայեցէք, որ գլուխնիդ չորնայ :

Առաւօտները անօթի փորանց խաղող կերէք՝ որքան որ կներէ ձեր քսակը :

Երաժիշտներուն ձայնը աշխարհ բռներ է :

Խեղճ ձայնատրներուն ձայնը չելներ: Եկեղեցի գացող չկայ :

Մեծ քանակութեամբ պուտրա կսպառի:

18 ~ 25 Օգոստոս

Սնանկութիւններ :

Թաղական մը պգտիկ գումար մը կ ' առնէ թաղին սնդուկէն եւ իւր աղջիկը կկարգէ :

Պատրիարքարան մը քանի մը պաշտօնեաներ կճանբէ, խնայողութեան պատճառաւ :

Կօշկակար մը քաղաքական յօդուած մը կհրատարակէ :

Անպամած, պիտի անձրեւէ :

25 ~ 31 Օգոստոս

Չովութիւն. գիշերները մի՛ նստիք ծովեզերքը: Մժողուկներէն հանգիստ չկայ:

Յիսուն ը հինգ տարու կին մը հինգ հարիւր ոսկի կխոստանայ հետը կարգուողին :

Այս ամսոյս մէջ ծնող մանչերն ալ աղջիկներն ալ բախտատուր կ' ըլլան. ազգը պէտք ունի անանկ մանչերու եւ աղջիկներու :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասատրդ չեմ :

Ո՞ր տեսնուիմք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնե՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունիմք :

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1 - 8 Սեպտեմբեր

Մերթ անձրեւ, մերթ արեւ, ուստի

Մերթ արտասուք, մերթ ժպիտ :

Մի՛ լայք, Աստուած ողորմած է :

Առուտուրները դադրեցան. հարուստներն աղքատներու վիճակը չեն ուզեր իմանալ :

9 - 16 Սեպտեմբեր

Իրաց վիճակը կմնայ եւ միեւնոյնը. թէեւ տիւ եւ գիշեր կհաւասարին, բայց հասոյթը եւ ծախքը չեն հաւասարիր. ծախքը աւելի մեծ է: Աւելի աղէկ էր, որ տիւը քիչ մը մեծ ըլլար եւ ծախքը պզտիկ: Կնիկները այս լեզուէն չեն հասկնար եւ էրիկներուն գլուխը կ' ուռեցնեն աշնան նորածնութեան պատրաստուելու համար :

16 - 23 Սեպտեմբեր

Հարաւային հողմը ուժով կփչէ: Ծովու վրայ գտնուողներուն համբերութիւն մաղթենք. ցամաքի վրայ գտնուողներուն ալ վիճակը աղէկ չէ: Ո՞ր ապրելու է հապա. երջանիկ ապրելու համար տեղ մը չգտնուեցաւ վերջապէս :

Ձուկը հարուստները կ' ուտեն: Միսը սուղ է: Աղքատներն ի՞նչ ուտեն :

23 - 30 Սեպտեմբեր

Ամպավար հողմեր :

Սանկ մէկդի կեցէք. քանի մը վաճառականներ կ' երերան ու կ' երերան: Սա թղթաբեր շոգենաւուն նայեցէք. քաշուած բոլոր փոխանակագիրներն յետ բերեր է :

Դրամական տագնապ :

Հացագործ մը հարուստ կարծուած էֆէնտիի մը դուռն ափ առած՝ շխտելիք խօսքեր կ' ընէ. տան տէրը շխտելու կգարնէ իրեն ուղղուած հայհոյութիւնները :

ՀԱՄԱՌ-ՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեն Ա՛հ եթէ կարողանայի չարիք ս՛ ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեւար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան ս՛ ալ չեն կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեն կրնար քեզի ստակ տալ, քիչ ս՛ ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1 - 8 Հոկտեմբեր

Երբեմն պարզ, երբեմն խառն, երբեմն անձրեւ, երբեմն փոթորիկ :

Հարսանեաց շաբաթ. կարգուող չկայ :

Լրագիր մը մեծատուն մը կշողոքորթէ :

Ընդհանուր հազ. անոնք որ գիւղ գնացած էին՝ կդառնան ձմեռնային բնակութիւնը. օդափոխութիւնը շատերուն մագերը ճերմկցուցած է. օդափոխութենէ սնանկացողներ ալ պակաս չեն :

9 - 16 Հոկտեմբեր

Խառնակ օդ :

Երկրագործը շատ գոհ չերեւիր :

Աշնան նորածեութիւնը շատ տուներու մէջ կոռոյ դռներ կբանայ: Երեւելի մարդ մը կմեռնի: Ածխավաճառները կլեցնեն իրենց մթերանոցները: Աստուած խելք

տայ իրենց :

16 - 23 Հոկտեմբեր

Խառնակ, խառնակ, վերջապէս խառնակ :

Սրտի հիւանդութիւն ունեցողները կնեղուին. երանի անոնց, որ սիրտ չունին, ազատ են այդ հիւանդութենէ: Լրագրին մէկը եր ե կուան պաշտածն այսօր կայրէ: Չերնուկներու վարժուած կրօնատր մը անարժանաբար աթոռի մը վրայ բարձրանալու կպատրաստուի, ազգին սանձերը բռնելու համար. Աստուած ողորմի: Հարուստ աղջիկ մը հօրը տունէն կփախչի:

23 - 31 Հոկտեմբեր

Հողմ եւ անձրեւ: Թատրոններու եղանակ, բոլոր օթեակները պարապ են :

Եօթն շաբաթուց վերջերն ենք, հարսնիք չլսուիր բնաւ. թրաքօման մեծ հարուած տուաւ այս տարի, թէ՛ գեղեցիկ աղջիկներուն եւ թէ՛ տգեղներուն :

Ամսոյս մէջ ծնող մանչերն փառատոր ապագայ կխոստանան, աղջիկներն ալ փայլուն անցեալ մը. ըստ այնմ վարուեցէք :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասատրդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունին, բաներնիդ գացէք :

Չէք երեւար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի շորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ'ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ՆՈՅՆՄԲԵՐ

1 - 7 Նոյեմբեր

Օդին խառնակութիւնը շարունակելի է :

Հարուստ կարծուած մէկը գիրքերը վիճակահանութեան կդնէ :

Ածխավաճառները կսխալին իրենց գուշակութեանը մէջ, օդը թէւ խառնակ, այլ բարեխառնակ է :

Ծովային ճանապարհորդութենէ հրաժարելու է: Լրագրի մը մէջ շինծու նամակներ կհրատարակուին. հաւատալու չէ :

Աղքատ մարդ մը գինով կ'ըլլայ եւ փողոցը կպատկի՝ քթին տակէն մրմնալով. « ես բանաստեղծ եմ »:

8 - 15 Նոյեմբեր

Այս խառնակութեան վերջը ...

Աղքատ մը վիճակահանութենէն տասն երկու հազար ոսկի կշահի եւ բարեկամաց բարեւ տալը կդադրեցնէ :

Նոր հանք մը կգտնուի, սուտերու հանք, խմբագրի մը կողմէն :

Շուկայն մարդ չկայ. ակոռայի ցաւերը կշատնան. կէս գլխու ցաւեր երեւան կու գան. գործերը ձախող վիճակի մէջ են. քաջութի՛ւն, քաջութիւն :

Ամեն մարդ օդի գաւաթին մէջ կփնտռէ մխիթարութիւն :

16 - 21 Նոյեմբեր

Պարզ եւ մերթ անձրեւ :

Օրհնեալ է Աստուած :

Ծառերը մերկացան: Ձմեռն կսկսի զգալի ըլլալ. մինչեւ ատոտի վիսթ կխաղացուի ամեն տեղ. տեղ տեղ ալ պեզիք : Ամենքն աչքերնին չորս բացած՝ զիրար կողոպտել կջանան. անմեղ զքօսանք:

21 - 30 Նոյեմբեր

Մերթ պեզիկ, մերթ պրիճ : Երիտասարդին մէկը պարահանդէսի մէջ աղջիկ մը կը գտնէ, կ' առնէ, հետը կտանի կարգուելու :

Ուրիշ սիրահար երիտասարդ մը մինչեւ լոյս պատուհանի մ' առջեւ կսպասէ ու կողոպայ. մէկէն ի մէկ հարստանալը դիւրին չէ, տղա՛ս :

Այս անսոյ մէջ ծնող մանչ կամ աղջիկ երկուքը մէկէն բարեպտող գաւակներ կ' ըլլան՝ եթէ անոնց դաստիարակութեան հոգ տարուի :

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՒՆՔ

Գլխուս վրայ Ես քուկին սպասաւորդ չեմ :

Ո՞ր տեսնուինք վաղը Կ ' ուզե՞ս հեռանալ եւ գլուխս չցաւցնել :

Կբողոքեմ Ա՛հ եթէ կարողանայի չարիք մ ' ընել քեզ :

Սուրճ մը կ'առնէ՞ք Գործ ունիմ, բաներնիդ գացէք :

Չէք երեսար կոր Պարտքդ ե՞րբ պիտի վճարես, աղա :

Կխոստանամ Բան մ ' ալ չեմ կրնար ընել :

Կրնանք քիչ մը տեսնուիլ Կրնա՞ք ինձի չորս հարիւր ոսկի տալ :

Ի՞նչ է մեր հաշիւը Այս օրերս չեմ կրնար քեզի ստակ տալ, քիչ մ' ալ համբերէ :

Աղան դուրս չելներ կոր Հիւր ընդունելու ժամանակ չունինք :

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1 - 6 Դեկտեմբեր

Քիչ մը հողմ, քիչ մը անձրեւ :

Մեծ մարդու մը հովանաւորութեան ներքեւ պարահանդէս մը կտրուի: Խմբագրին մէկը վարդապետ կձեռնադրուի, վարդապետ մ' ալ կը պատժուի:

Փոխառութեան գրոյցք կը լսուին: Գողեր կմտնեն տուները եւ մէկ մէկ քիչ բան վերցնելով կշատանան: Ապրին ասանկ սակաւապէտ գողերը :

7 - 14 Դեկտեմբեր

Անձրեւ եւ ձիւն. տժգոհութեան պատճառ տալու չափ ցուրտ չկայ. լրագրի յարձակմանց մէջ քիչ մը պաղութիւն կայ :

Հարուստի մը գաւակը երգիչ օրիորդի մը հետ կփախչի: Երթան բարեւալ :

Լեզուաբնութիւնն քայլ մ' ալ առաջ կ' երթայ :

14 - 21 Դեկտեմբեր

Բժիշկ ըլլալու ամիս :

Քիթ մը չկայ, գլուխ մը չկայ, ակոսայ մը չկայ, ականջ մը չկայ որ չցաւի. ի՞նչ խայտառակութիւն է աս. յանցանքն իրենցն է. զգուշանան թող. մինչեւ լոյս պարելու հետեւութիւնն է :

Բժիշկներն ալ թող վաստկին. ողջ ըլլան որ մեռցնեն մեզի :

22 - 31 Դեկտեմբեր

Անձրեախառն ձին :

Հաշու է կշիռներ հանելու պատրաստություններ :

Հարուստ մը չորս աղքատ աղջիկներ կը կարգէ հոգւոյն համար: Պետական
մարդու մը ճառէն կհասկցուի, թէ աշխարհիս խաղաղութիւնը անվրդով պիտի
մնայ :

Ամսոյս մէջ ծնող գաւակներէն մեծ բան չակնկալուիր :

Մնանք բարով :

Տեսնուինք 1893 Վին :